ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Մկրտչյան Նարեկ [1]

ՂԱԶԱԽՍՏԱՆ. ԿԵՐԵՑԻ ԵՎ ՋԱՆԻԲԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՆԱԶԱՐԲԱԵՎ

Բանալի բառեր՝ *Ղազախստան, ազգային ինքնություն, տոհմացեղային/քոչվորական հարաբերություններ, ռուսական գերիշխանություն*

Մուտք

Հոդվածում փորձ է արվում ընդհանուր գծերով ներկայացնել ղազախական պատմության շրջադարձային իրողությունները: Համառոտ քննարկվում է ղազախական պատմության ժողովրդական ընդվզումների (18-19 րդ դարեր) կենսամշակութային և քաղաքական ենթատեքստերը: Ղազախական ընդվզումների թեման քննադատական վերլուծությունների է ենթարկվել դեռևս խորհրդային պատմագրության սկզբնավորման շրջանում: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ ղազախական ընդվզումների սկզբունքային մղիչ ուժը ոչ թե ազգային գաղափարներն էին, այլև ղազախական ժողովրդի քոչվոր-անասնապահական կենսաձևի խաթարման իրողությունը:

Հոդվածում ներկայացվում է նաև պատմական առանցքային ժամանակաշրջանների՝ կայսերական Ռուսաստանի և

[1] ԵՊՀ, Համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի Ամերիկյան Համալսարան, դասախոս, էլ. փոստ՝ nmkrtchyan@aua.am

Խորհրդային Միության քաղաքականություններով պայմանավորված ղազախական ազգային ինքնության փոխկերպման գործընթացները: Աշխատանքում քննարկվում է նաև ռուսական սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և կրթական քաղքականությունների արդյունքում ղազախական հասարակությունում ի հայտ եկած ինքնութենական հիմնախնդիրները և նորարարությունները: Հատկապես անդրադարձ է կատարվում *ռուսականության գերիշխանության* արդյունքում ղազախական ազգային ինքնության և լեզվի լուսանցքում հայտվելու հիմնախնդրին: Ներկայացնելով Ղազախստանի խորհրդային շրջանի առաջացրած ժողովրդագրական և ինքնութենական հիմնախնդրիները, արժևորվում է նաև նրա՝ Ղազախստանին տեխնոլոգիապես արդիականցնելու իրողությունը: Դրանք այն տեխնոլոգիաներն էին, որոնք հետգայում Ն. Նազարբաևի վարչակարգը օգտագործելու էր ազգային տարբեր նախագծերում:

Ինքնութենական Այլակերպումներ

Ղազախները թյուրքական լեզվաընտանիքի ղպչաղական լեզվախմբին պատկանող թյուրքախոս ժողովուրդներ են: 11-15-րդ դարերում ղպչաղները իբրև առանձին քաղաքակրթական սոցիում առանցքային դերակատարում են ունեցել եվրասիական մայրցամաքի կենտրոնական հատվածում ապրող ժողովուրդների մշակույթների վրա:[2]

Ղպչաղների մասին եվրասիական տարբեր ժողովուրների մոտ առկա բազմաբնույթ մեկնաբանությունները հավաստում են վերջիններիս կարևորագույն դերակատարության իրողությունը:

[2] Ахинжанов, С.М., Кыпчаки в Истории Среденевекового Казахстана, Алматы, Национальная Академия Наук Республики Казахстана, Институт Археологии им. А.Х. Маргулина, 1995, стр. 4.

Հարկավ նրանց միջև առակ էին տարբերություններ, սակայն ղպչաղական լեզվուն, ըստ էության, տարբեր կրոնների և լեզուների միջև համագործակցության հետաքրքիր հնարավորություններ էր ստեղծում:[3] Չնայած որ արաբական, պարսկական, բյուզանդական/լատինական, հունական, սլավոնական, մոնղոլական, չինական, վրացական և հայկական աղբյուրներում ղպչաղները հիշատակվում են նաև այլ անուններով, դրանք հիմնականում վերաբերում են Եվրասիայի հյուսիսային և կենտրոնական հատվածներում ապրող ղպչաղներին: Օրինակ՝ առավել հայտնի *Qıvčaq/Qıbčaq/Qıpčaq* տարբերակներից բացի կիրառվում էր նաև *Plawci* լեհական լատիներենով, *Plavci* չեխական լատնիերենով, *Pallidi, Flavi* լատիներենով, Valwen, Falwen, Falones, գերմաներենով և *զխարտէշքն* հայերենով:[4] Ղպչաղական քոչվոր անասնապահ ցեղախմբերը, ապրելով ղազախական տափաստանի հյուսիս-

[3] Այս պարագային նշենք, որ հայերը նույնպես կրառել են ղպչաղական լեզվի որոշ գործառույթներ միջին դարերերում: Տե՛ս՝, See, Süer Eker, Hülyakasapoglu Çengel, *Kipchak Turkic As A Part Of The Balkans And Eastem Europe History-Geograph,* Simpozionul Internațional „Cartea. România. Europa.” 20-24 Septembrie 2009, Bucureşti: Editura Biblioteca Bucureştilor, 2010, p. 535. See also, E. Schütz, *Re-Armenisation And Lexicón From Armeno-Kipchak Back to Armenian, Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae*, Vol. 19, No. 1 (1966), pp. 99-115.

[4] Այս մասին առավել մանրակրկիտ հետազոտությունների համար տե՛ս, Peter B. Golden, Qıpčaq in (eds) Nurettin Demir, Birsel Karakoc, Astrid Menz, Turkcology and Linguistics, Eva Agnes Csato Festshrift, Hacettepe Universitesi Yayinlari, 2014, pp. 183-184. Peter B. Golden, Religion among the Qípčaqs of Medieval Eurasia, Central Asiatic Journal, Vol. 42, No. 2 (1998), pp. 180-237.

արևելյան շրջաններում, առանցքային ազդեցություն են գործել նաև ղազախների էթնոգենեզի վրա[5]:

Այդուամենայնիվ ղազախական ազգի էթնիկական պատմության ընդհանրական պատկերի պարագայում բավականին բարդ է նշմարել ղազախ ազգության ձևավորման հստակ որևէ տարեթիվ: Սակայն, համաձայն ղազախական, ռուսական և արևմտյան տարբեր աղբյուրների և հեազոտությունների՝ ղազախական ազգության ձևավորման և զարգացման փուլը համարվում է 15-րդ դարի ղազախական խանության շրջանը: 15-րդ դարը շրջադարձային նշանակություն ունեցավ ղազախական ինքնության հետագա զարգացման համար: Այս շրջանում հատկապես առանձնակի ուշադրության են արժանի *Կերեյի և Ջանիբեկ* խաների միավորիչ գործողությունները, ովքեր, ներգրավվելով ղազախ ղպչաղական ցեղերի՝ ուզբեկական խանությունից առնձնացման պայքարին, համախմբեցին ղազախներին որոշակի էթնիկական տարածքի վրա:

Արդյունքում ձևավորվեցին ցեղային հարաբերությունների վրա հիմնված հիերարխիկ *քաղաքական* միավորումներ: Վերջիններս, իրենց մեջ միավորելով ղազախական ցեղերին, ձևավորեցին երեք ցեղային դաշինք (հորդաներ կամ *Ժուզեր*)՝ մեծ հորդա /***Улу жүз***/, միջին հորդա /**Орта жүз**/ և փոքր հորդա /**Кіші жүз**/:[6] Ղազախական ցեղերի միավորումը և դրանց ուղեկցող հասարակական հարաբերությունները հետագայում դառնալու էին

[5] Толостова С.П. Жданко, Т.А. Абрамзон С.М, Кисляаков, Н.А. Народы Средней Азии и Казахстана, Москва, Академия Наук СССР, Институт Этнографии Имени Н.Н. Миклухо-Маклая, 1963, стр. 324.

[6] Karl Baipakov, Bulat E. Kumekov, The Kazakhs, In History of Civilizations of Central Asia, vol. 5, Development in contrast: from the sixteenth to the mid-nineteenth cebtury, Chahryar Adle Habib, I., Baipakov, K. M, (Eds.). UNESC Opublishing, 2003, p. 91

ղազախների և Ղազախստանի սոցիալական, տնտեսկան և քաղաքական կյանքը բնորոշող իրողություններ: Ղազախական ցեղերի՝ մեկ տարածքում համախմբումը և ժուզերի ստեղծումը կարելի էր համարել ելման կետ էթնիկական ինքնագիտակցության զարգացման համար: Եվ հատկանաշական է, որ մնչ անկախության ձեռք բերումը ***ղազախ*** հասկացության գլխավոր ենթատեքստը տոհմացեղային կամ ներհամայնքային հարաբերություններն էին: Սակայն, սրա հետ մեկտեղ, չպետք է մոռանալ, որ քոչվոր անասնապահական կենցաղավարության պայմանները ըստ էության չէին կարող ապահովել արդի այնպիսի տեխնոլոգիաների զարգացումը ինչպիսիք էին ազգաշինությունը և պետականությունը: Ղազախական խանության կործանման պատճառներից մեկը նաև ցեղային հարաբերություններից կամ քոչվորական կենսաձևից քայլ առաջ չկատարելու իրողությունն էր: Մեկ խանության մեջ գործող տարբեր ցեղային միավորումների հակասական շահերի պայմաններում ղազախական խանությունը չկարողացավ պատշաճ պատասխանել արտաքին մարտահրավերներին: Ավելին՝ այն հասարակության մեջ, որտեղ իշխում է քոչվորական կենսաձևը նվազագույնի են հասցված կանոնավոր զինված ուժեր ունենալու հնարավորությունները: Բանակի բացակայության պայմաններում արտաքին թշնամիների սպառնալիքներին դիմակայելու համար ցեղային կառույցների շրջանում առաջանում է ինքնապաշտպանական առանձին, երբեմն միմյանց հակասող ծրագրեր: Նման իրողողությունների առկայության պատճառով էր նաև, որ ղազախական խանությունը տրոհվեց երեք (փոքր, միջին և մեծ) կլանային ազլոմերացիաների:

Արդեն 18-րդ դարում ջունգարական ցեղերի ներխուժման սպառնալիքի հետևանքով ղազախական տափաստանում

ստեղծվել էր սոցիալ տնտեսական և քաղաքական ճգնաժամ: Նման արտաքին մարտահրավերներին պատասխանելու համար անհրաժեշտ էր տեխնոլոգիական ճիգ, որի բացակայությունը հանգեցնելու էր տվյալ քաղաքական միավորման ինքնիշխանության կորստին: Այսպիսով, ստեղծվել էր հետևյալ պատկերը. կենտրոնում գտնվում էր քոչվոր-անասնապահական հարաբերությունների վրա հիմնված ղազախական կլանային կառույցը՝ մի կողմում հզոր ռուսական ցարական կայսրությունը, մյուս կողմում՝ ջունգարական և միջինասիական ռազմատենչ խանությունները:

Չունենալով զինված բանակ պահելու հնարավորություն և տեխնոլոգիական փորձ՝ ղազախական երեք կլանային ազլոմերացիաների խաները որոշում կայացրեցին հայցել ռուսական կայսրության օգնությունը՝ պաշտպանվելու թշնամիների հնարավոր հարձակումներից: Ռուսական կայսրության *գերիշխանության* հաստատումը ղազախաբնակ տարածքների նկատմամբ տեղի ունեցան մի քանի շրջափուլերով: Չնայած Ռուսական կայսրությանը հաջողվեց հեշտությամբ հավատարմության երդումներ կորզել բոլոր երեք ցեղային միություններից (1731թ. փոքր, 1740թ. միջին, 1742թ. մեծ)՝ մեծ հորդան, այդուամենայնիվ, կիսով չափ փորձում էր պահպանել իր ինքնիշխանությունը, որը գոյատևեց մինչչ կասրության զորքերի կողմից 1865թ. Տաշքենդի, 1873 թ. Սամարղանդի ու Բուխարայի և 1876 թ. Կոկանդի գրավումը:[7]

Չնայած, որ շատ հետազոտողներ ղազախական պատմության այս շրջանը ներկայացնում են իբրև ռուսական կայսրության կողմից Ղազախստանի բռնակցում, Ղազախստանը

[7] Bhavna Dave, Kazakhstan: ethnicity, language and power, London, New Yourk: Routledge, 2007, p. 35.

իբրև առանձին միավոր երբևէ ռուսական կայսրության մաս չի կազմել: Տաշքենդի գրավմամբ կայսրությանը իր տիրապետությունը հաստատեց տարբեր թյուրքական ժողովուրդների բնակավայր հանդիսացող Մեծ Թուրքեստանի[8] մի մասի նկատմամբ, որը մեզ հայտնի է իբրև Ռուսական Թուրքեստան, և որի ղազախական հատվածը ներառում էր այժմյան Ղազախաստանի հարավային շրջանները՝ ներառյալ նախկին մայրաքաղաք Ալմա-Աթան և նրա շրջակայքը:

Ռուսական կայսրության մուտքը ղազախական տարածքներ պատմական և շրջադարձային նշանակություն ունեցավ. այն ենթադրում էր լայնածավալ կերպափոխումների մեկնարկ հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային և վարչական ոլորտներում: Բնականաբար, նման պայմաններում *ռուսականության* եզրի տարանջատումը ղազախական հասարակության ենթատեքստից դժվար էր պատկերացնել: Սակայն, անժխտելի փաստ է այն հանգամանքը, որ ռուսական կայսրության կողմից Կենտրոնական Ասիայի *գաղութացումը* ուղեկցվեց արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներմուծմամբ: Տեղին է հիշատակել Է. Սաիդի հետևյալ ձևակերպումը. «*բոլոր կայսրությունները ձևակերպում են իրենց նպատակները իբրև քաղաքակրթական առաքելություն»*.[9] Կայսրության *«քաղաքակրթական առաքելության»* գաղափարը գալիս է՝ վերածվելու կայսրության ծավալապաշտության և գաղութացման գործնթացները լեգիտիմացնող ուժի: Ռուսական

[8] Մեծ Թուրքեստանը հետագայում պետք է բաժանվի Ռուսական, Չինական Թուրքեստանի և Ավաղանական Թուրքեստանների: Ռուսական Թուրքեստանը տարածքը այժմ զբաղեցնում են Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը և Թուրքմենստանը:

[9] Edward Said, Orinetalism, New York: Vintage Books, 1979, p. 142.

կայսրության «քաղաքակրթական առաքելությունը» ղազախական «հետամնաց» հորդաներին քաղաքակրթություն մատակարարելն էր: Այս համապատկերում հատկապես հետաքրքիր է դիտարկման ենթարկել նոր ենթակառուցվածքների ի հայտ գալը: 1880-ականների վերջին Կրասնովոդսկ-Սամարականդ-Տաշքենդ և Տաշքենդ-Օրենբուրգ երկաթգծերի կառուցմամբ դյուրացվեց մի կողմից ռուսական քաղաքական-մշակութային ազդեցության ներքո գտնվող և մյուս կողմից իսլամի ու տոհմացեղային ավանդական արժեհամակարգերով ապրող քաղաքների միջև կապը: Տնտեսական գործոնից զատ, այս ենթակառուցվածքները նաև շրջադարձային նշանակություն ունեցան կրթական, մշակութային և ինքնության այլակերպումների առումներով:

Ղազախական մտավորականության կորիզը հիմնականում բնակվում էր Ռուսական Թուրքեստանի հյուսիսային քաղաքներում՝ Օրենբուրգ, Օմսկ, Սեմիպալատինսկ և Կազան, որտեղ նրանք ավելի շատ շփվում էին ռուսական մշակույթի և մտավորականության քան Թուրքեստանի այլ հատվածներում ապրող ղազախախոս ավանդական ղազախական արժեբանություն ունեցող մտավորականների հետ: Թերզարգացած ենթակառուցվածքների պատճառով հաճախ հարավղազախական տարածքներում ապրողները դուրս էին մնում ազգային տարբեր դիսկորսներից և շարժումներից: Մասնավորապես՝ բերենք այն օրինակը, երբ 1905թ.–ին ստեղծված համաղազախական շարժում ծավալող Ալաշ Օրդա կառույցում, որին դեռ կանդրադառնանք, առաջնորդների մեծամասնությունը ներկայացված էին Միջին Հորդայից՝ հյուսիսային և կենտրոնական ղազախական շրջաններից: Այս իրավիճակի փոփոխման միտում սկսվեց

նկատվել միայն այն ժամանակ երբ 1906թ.-ին սկսեց գործարկվել Օրենբուրգ-Տաշքենդ երկաթգիծը:[10]

Գոյություն ունի նաև այս երևույթի մեկնաբանման մեկ այլ մոտեցում համաձայն որի կայսրության քաղաքակրթող առաքելության շնորհիվ ներդրված նորարարական տեխնոլոգիաները դառնում են ծայրամասի նկատմամբ վերահսկողությունն ամրապնդելու և կենտրոնի արժեհամակարգը ավելի մատչեի դարձնելու գործիքներ: Այսպիսով, Ղազախստանի հյուսիսում գործող ռուսական կրթական հաստատությունները երկրի մնացյալ հատվածի համար դարձան ավելի հասանելի քան էր: Երկաթգծի կառուցումը նաև փոխեց տարածքի ժողովրդագրական պատկերը. կրթված ռուսական զանգվածի ծրագրված ներհոսքի արդյունքում մահմեդական քաղաքների կողքին սկսեցին վեր խոյանալ նոր ռուսական քաղաքներ՝ իրենց ուղեկցող կրթական հաստատութենական և հասարկական նոր հարաբերություններով:[11]

Այս ամենի համատեքստում ղազախական հասարակության զարգացումը տեղի էր ունենում ի օգուտ ռուսական կայրության գերիշխանության: Նոր ձևավորևված կրթական, մշակութային և վարչական համակարգերը ներկայանում էին իբրև ռուսական գերիշխանության հաստատման գործիքներ: Զարգացած կայսրության կողմից Ղազախստանի արդիականացմամբ և արդի նախապատվությունների և նորմերի առաքմամբ՝ Ռուսաստանը հնարավորություն էր ստանում ուրվագծելու ղազախի աշխարհընկալման սահմանները: Սա դառնում է այն

[10] Bhavna Dave, op. cit. p. 44.

[11] Ira M. Lapidus, A History of Islamic Societies, Cambridge University Press, 2014, p. 669.

սահմանագիծը, որից այն կողմ տվյալ հասարակության ներկայացուցիչները հետ-գաղութատիրական եզրաբանությամբ զբաղեցնում են *ենթասպայի* (subaltern) կարգավիճակը: Սկզբնապես այս հղացքը օգտագործվել է Ա. Գրամշին, ով ներկայացնում էր *ենթասպային* իբրև իր ազգային պատմություններից հեռացված, իր հասարակությունում ստորադասված և արհամարված անհատի կամ անհատների խմբի:[12] Ըստ էության, այստեղ հարցականի տակ է առնվում ազգային ինքնության ձևավորումը: Գաղութարարի լեզուն՝ ռուսերենը մետաստազների զարգացման սկզբունքով սկսեց ներթափանցել հասարակության մշակութային, կրթական և քաղաքական ոլորտներ՝ վերածելով ղազախերենը կենցաղային լեզվի:

Ղազախստանի կրթական համակարգում ռուսերեն լեզվի չափանիշների (standardization) ներդրմամբ ցարական կառավարությունը հող նախապատրաստեց հետգա հասարակական և մշակութային կերպափոխումների համար: Այս պարագայում Ռուսաստանի «*քաղաքակրթող առաքելությունը*» դառնում է ղազախստանյան կրթական համակարգի ռուսականացման գործընթացի նկատմամբ հասարակական համաձայնության և լեգիտիմացման աղբյուր: Ռուսական կայսրության ներմուծած կարևորագույն նորարարությունը ղազախական հասարակությունում աշխարհիկ կրթական համակարգի ներդրումն էր: Մինչ այդ ղազախական կրթական համակարգը հիմնված էր ավանդական իսլամական *մակտաբների և մադրասաների* համակարգի վրա, որոնք գործում էին մզկիթներինկի հովանու ներքո:[13] Կրթական համակարգում

[12] Steven Jones, Antonio Gramsci, London: Rutledge, 2006.

[13] K. Nurpeis, Kazakhstan, In History Of Civilizations Of Central Asia, vol. 6, Towards the contemporary period:from the mid-nineteenth to the end of the

արձանագրված առաջընթացներից մեկը համարվեց իգական սեռի ներկայացուցիչներին կրթություն ստանալու իրավունքի ընձեռումը: Որպես արդյունք 19-20-րդ դարերում արդեն գործում էին ռուս-ղազախական, ռուսական-քերականական և միջնակարգ դպրոցներ, ինչպես նաև տղաների և աղջիկների համար նախատեսված ավագ դպրոցներ՝ գիմնազիաներ:[14] Այդուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ նման գործընթացները ղազախական հասարակությունում ձևավորվելու էր նոր մշակութային կարգ՝ միտված ռուսական ազդեցության տարածմանը: Կրթական համակարգը դառնում էր ռուսական գաղափարաբանության սպառման կարևորագույն կենտրոններից մեկը: Բացի այդ, ցարական իշխանության «Ռուսական մեծ մշակույթի» ներդրմամբ ցանկանում էր հակազդման պայքար ծավալել մի կողմից թյուրքական, մյուս կողմից իսլամական գաղափարների դեմ:[15]

Ղազախականի պարագայում ցարական կառավարությունը իր գաղութային առաքելությունը հասարակական համերաշխության մթնոլորտում կազմկերպելու համար ներգրավեց նաև մտավորականներին, ովքեր և ուրվագծեցին ղազախական ինքնության այլակերպման հեռանկարը: Այս առումով տեղին է հիշատակել նախախորհրդային շրջանի ղազախ մտավորական Իբրայի Ալտընսարիին (1841–89), ով, լինելով Տուրգայի մարզի հանրային դպրոցների տեսուչ, զարագացրեց

twentieth century, ChahryarAdle, , Madhavan K. Palat, AnaraTabyshalieva, UNSECO publishing, 2003, p. 251.

[14] Նշվ. աշխ., էջ. 151:

[15] Jacob M. Landau, Barbara Kellner-Heinkele, *Politics of Language in the Ex-Soviet Muslim States: Azerbayjan, Uzbekistan, Kazakhstan, Kyrgyzstan, Turkmenistan, Tajikistan*, (C. Hurst & Co. Publishers, 2001), pp.20-21.

ռուս-ղազախական հանրակրթական համակարգը: Ղազախների շրջանում ռուսականության տարածման գործում հատկապես աչքի էր ընկնում նրա՝ ռուսերենից թարգմանությունները և ղազախերենի համար կիրիլիցա այբուբենի կիրառումը:[16]

Ռուսական գաղութային քաղաքականության ազդեցության ներքո գործող ղազախ ընտրանու մեկ այլ ներկայացուցիչ էր ռուսական կրթություն ստացած Մուհամմեդջան Տինիշպայեվը, ով ակտիվ մասնակցություն էր ուեցել 1900-ականների Կենտրոնական Ասիայի երկաթգծային շիանարարություններին իբրև ինժիներ ապա ներկայացված էր եղել Թուրքեստանյան Երկրորդ Դումայում և իրեն համարում էր փոքր ղազախական «ինտիլգենցիայի» ներկայացուցիչ: Նրանք օգտագործվում էին «*խոնհար դասին*» (humble class) կենտրոնական իշխանության հրմանագրերն ու օրենքները հրամցնելու և հասարակական համերաշխություն ձևավորելու համար: Օրինակ՝ Տինիշպայեվը մշտապես քարոզում էր կայսրության քաղաքացիության գաղափարի առավելությունը էթնիկության նկատմամբ, հորդորում էր ղազախական տարբեր կլաններին կայսրության համար կամավոր զենք վերցնել և ենթարկվել աշխատանքային պարտադիր հավաքների հրամանագրերին:[17] Ասյպիսվ, «օգտգործելով» հասարակության քիչ թե շատ հեղինակություն վայելող մտավորականությանը՝ կենտրոնական իշխանությունները ցանկանում էին ձևավորել ներհանրութենական համաձայնություն կայսերական քաղաքականության նկատմամբ: Մյուս կողմից նրանք մեծապես

[16] Elizabeth E. Bacon. (1966). Central Asians under Russian rule: a study in culture change. Cornell University Press, 1996, pp. 101-102.

[17] Daniel Brower, Turkestan and the Fate of the Russian Empire, New Yourk: Routledge, 2012, p. 8.

նպաստում էին կայսրության քաղաքականթությունների լեգիտիմացմանը:

Անշուշտ, ռուսականացման գործընթացները ոչ վաղ անցյալում նպաստող գործոններ էին ունեցել, որոնցից թերևս ամենաառանցքայինը ռուսախոս էթնոսի ներհոսքն էր ղազախաբնակ տարածքներ: Ռուսաստանի կողմից ղազախական տափաստանի նկատմամբ վերահսկողություն սահմանելը համընկավ ռուսական ճորտատիրության անկմանը (1861),[18] որի արդյունքում հազարավոր ռուս և ուկրաինացի գյուղացիներ հողեր յուրացնելու նպատակառվ սկսեցին շարժվել դեպի Միջին Ասիա:[19] Վերոնշյալի արդյունքում փոփոխվեց ղազախաբնակ տափաստանի ժողովորդագրական պատկերը, և, համաձայն 1897 թ.-ին անցկացված ցարական առաջին մարդահամարի տվյալների, ռուս (772,000), ուկրաինացի (100,00) և բելառուս գյուղացինը կազմում էին Ղազախստանի բնակչության 19%-ը:[20] Ռուսական կայսրության կառավարման սկզբունքը հիմնված էր «*բաժանել և ղեկավարել*» գաղափարի վրա: 1867 թ. Ալեքսանդր 2-րդ *ցարի* (1855-1881) երկու հրամանագրերով Ռուսական Թուրքեստանի ղազախական հատվածը բաժանվեց երեք ռազմական գեներալ-նահանգապետությունների՝ Թուրքեստանի (Սիրդարյայի և Սեմիրեչիեյի մարզերը), Օրենբուրգի (Ուրալի և Տուրգայի մարզերը) և Արևմտյան Սիբիրի (Ակմոլա և Սեմիպալատինսկ մարզերը), որոնք կառավարվում էին ցարի կողմից նշանակված

[18] K. Nurpeis, նշվ. աշխ., էջ. 247:
[19] Նշվ. աշխ., էջ.184:
[20] Robert A. Lewis, Richard H. Rowland, Clem, R. S., Modernization, Population Change and Nationality in Soviet Central Asia and Kazakhstan. Canadian Slavonic Papers / Revue Canadienne des Slavistes, vol. 17, no. 2/3, Russian and Soviet Central Asia, 1975 p. 289.

գեներալ նահանգապետերի կողմից:[21] Նորակառույց ադմինիստրատիվ, քաղաքական և դատական ինստիտուտները բացարձակապես գտնվում էին ցարական կայսրության վերահսկողության ներքո: Ռուսների կողմից բարձր վարչական պաշտոնների զբաղեցումը տիտղոսային ժողովրդին տանում էր մարգինալացման ճանապարհով:

Մյուս կարևոր քաղաքական իրողությունը, որն ազդեց Ղազախստանի ժողովրդագրության և տնտեսության վրա, Ստոլիպինի ագրարային վերափոխումներն էին (1906-1912): Համաձայն Ստոլիպինի վերափոխումների 17 միլիոն հեկտար ղազախստանյան հող նախատեսվում էր տրամադրել սլավոնական գյուղացիությանը: Գյուղատնտեսության ոլորտում ռուսների ներգրավվածությունը ինքնանպատակ չէր. գաղութարարի համար, նախ և առաջ, անհրաժեշտություն է ավելի հմտորեն տիրապետել տեղացի ժողովուրդների տեխնոլոգիաներին, քան հենց իրենք՝ տեղացիները, կարող էին: Գյուղատնտեսական ոլորտը համարվում էր ոչ միայն քոչվոր-անասնապահ ղազախների տնտեսության, այլ նաև ռուսական կայսրության տնտեսության առանցքային սեկտորը:

Ազգային ինքնագիտակցության զարթո՞նք, թե՞ պայքար հանուն քոչվորական կենսաձևի

18-19րդ դարերը ղազախ ժողովրդի պատմության համար շրջադարձային նշանակություն ունեցան. ուրվագծվում էր ղազախ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումների ազգային և գաղութային հակասական ճանապարհները:

[21] K. Nurpeis, նշվ. աշխ., էջ.248.

Չնայած մի քանի անհատական ռազմական ըմբոստությունների՝ ղազախական հասարակությունում լայնածավալ համաժողովրդական ազգային ընդվզում ռուսական իշխանության կամ միջինասիական ռազմատենչ խանությունների[22] դեմ տեղի չունեցան: Հասկանալու համար համաժողովրդական պայքարի բացակայության երևույթը, որն, ի դեպ, դյուրացրեց ռուսական գերիշխանության հաստատումը՝ բավական է միայն ընդգծել ազգային գաղափարների չափազանց թույլ արտահայտված լնելու հանգամանքը: Ուսումնասիրելով ժողովրդական զինված ընդվզումների տարբեր օրինակներ՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ այդ ընդվզումներում շարժիչ ուժի դեր են կատարել ոչ թե ազգային գաղափարները, այլ քոչվոր-անասնապահական կենսամշակույթին հակասող ցարական քաղաքականությունը: Սրիմ Դատովայից[23] ու Իսատայա Թայմանովից մինչև Քենեսարի, ղազախական ազատագրական

[22]Նշենք, որ ղազախները նաև ազատգրական պայքար էին մղում Խիվայի և Կոկանդի խանությունների դեմ, որոնք հավակնություններ ունեին ղազախական տափաստանի առևտրային բանուկ տարածքների նկատմամբ:

[23]Սրիմ Դատովան *փոքր ժուզի* ներկայացուցիչ էր, որի ընդվզումը տեղի է ունեցել 1783-1789 թվականներին ցարական իշխանությունների կողմից ղազախական անասնապահների մուտքը դեպի ուրալյան տարածքներ փակելու, *կազակական* զորքերի կողմից անասնագողության և ավազանու իրավունքերի խախտման պատճառով: Նույն տրամաբանությամբ 1826-1838 թ. մեկ այլ ըմբոստություն է հասնունանում սուլթան Կայիպ-Ղալի Եսիմովի գլխավորությամբ, ում գլխավոր նպատակը սաստիկ ցրտերից անասուններին ոչնչացումից փրկելու համար ղազախներին դեպի ուրալյան տարածքներ ուղղորդելն էր, որը բնականաբար ճնշվում է կայսրության կողմից: Տե՛ս, Абдижапар Абдакимов, *История Казахстана (с древнейших времен до наших дней)*, Алматы 1994, стр. 74-77.

պայքարի հիմքում ընկած էր ցարական, խանական և սուլթանական իշխանությունների կողմից հողօգտագործման ավանդական մեթոդների և իրավունքի, ինչպես նաև քոչվորական կենսամշակույթի խախտման իրողությունները: Խնդիրն այն էր, որ բացառությամբ Քենեսարիի շարժման այդ սոցիալական և քաղաքական ընդվզումները ազգային երանգներ չընդունեցին: Քենեսարի ազատագրական պայքարը (1837-1847) չէր կրում արմատական իսլամի տարրեր և կոչված էր վերադարձնելու ղազախական տափաստանի գրավված հողերը, ստեղծելու անկախ ղազախական պետություն: Այդուամենայնիվ, նրա գլխավորած շարժումը տարբերվում էր մնացածներից, քանզի նա կարողացել էր համախմբել բոլոր երեք ժուզերին և կազմել զինյալների բազմաէթնիկ խումբ: Չնայած ղազախական պատմագրության հակասական կարծիքների՝ այս շարժմանը, որոշ վերապահումներով, կարելի է տալ ազգային ազատագրական շարժման գնահատական, քանզի այն ծնվել էր ոչ թե քոչվոր-անասնապահական կենսաձևի խաթարման հետևանքով, այլ ազգային սահմանների հաստատման պահանջով:[24] Այս առումով բավականին հիմնավոր հետազոտություն է իրականացրել Լովելլ Թիլլեթը իր «Մեծ Ընկերությունը» (The Great Friendship) աշխատությունում: Հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է ղազախական խորհրդային պատմագրությունում ազգային ազատագրական շարժումների ներկայացման խնդրին՝ շեշտադրելով վերջինիս ներկայացման քաղաքական ուղղորդվածությունը:[25]

[24] Жамбыл О. Артыкбаев, Казахское Обшестжо в XIX веке: традиции и иновации, Караганда: Полиграфия, *1993*, стр. 276-284.

[25] Տես՛, Lowell Tillett, *The Great Friendship: Soviet Historians on the Non-Russian Nationalities, The University of North Carolina Press, 1969.*

Ներկայացված ընդվզումների տապալվելուց հետո Ղազախստանում միայն 20-րդ դարի սկզբին, ինչպես հողային, այնպես էլ ժողովրդագրական խնդիրների պատճառով ղազախական մտավորականության շրջանում գաղութային դիմադրության և անկախ ազգ-պետություն ձևավորելու քաղաքական շարժում է ծավալվում: Ղազախական ընդվզման պատճառներից մեկը հանդիսացավ առաջին աշխարհամարտը: Կենտրոնական Ասիայի ժողովուրդները, այդ թվում և ղազախները, երբևիցէ կայսերական բանակի մաս չէին կազմել: Սակայն պատերազմում Ռուսաստանի կրած դժվարությունների պատճառով Ցար Նիկոլայ երկրորդը 390.000 կենտրոնական ասիացիներ ռազմաճակատ զորակոչելու հրամանագիր ստորագրեց:[26] Ղազախական ընդվզումը, որը հատկապես արտահայտված էր հյուսիսում (հյուսիսը սլավոնական ժողովուրդներով բնակեցված ամենաստվար հատվածն էր) հանդիպեց ռուսական բանակի դաժան ճնշմանը: Չնայած ճնշումներին՝ ռուսական կայսրության կործանումից հետո ղազախ մտավորականությունը ձեռնամուխ եղավ միացյալ և անկախ Ղազախստան ստեղծելու **Ալաշ** շարժմանը:[27] 1917թ. փետրվարյան հեղափոխության ժամանակ **Ալաշ Օրդա** քաղաքական կուսակցության հիմնումով Ալաշ շարժումը ինստիտուցիոնալացվեց: 1917 թ. Հուլիսին՝ Օրենբուրգում, տեղի

[26] Gregory Gleason, The Central Asian States: Discovering Independence, Westview Press,1997, p. 53

[27]Ալաշ շարժումը ղեկավարում էր Ալիխան Բուկեիխանի և այլ ռուսական կրթություն ստացած մտավորականների կողմից ինչպեես օրինակ Ա. Բայտուրսունով, Խ. Դոսմուխամեդով, Մ. Դուլատով,Խ. Գաբբասով, Ս. Ամանժոլով, Մ. Տունուշբաեվ, Բ. Կուլմանով, Մ. Ժումբաեվ, Մ. Չոկաեվ, Գ. Կարաշեվ և Ա. Երմեկով:

ունեցած համաղազախական կոնգրեսի արդյունքում Ալաշ Օրդա անվամբ ստեղծվեց անկախ կառավարություն, որն առաջնային էր համարում Ղազախստանի տարածքային ինքնավարության, ինչպես նաև ղազախական հողերի բռնագրավվման և էթնիկ իմմիգրացիայի կանխման դեմ ուղղված քայլերը:[28] Նշյալ ծրագրերի իրականացման համար ալաշօրդայականները կոալիցիոն հարաբերություններ հաստատեցին հակաբոլշևիկյան ուժերի՝ սպիտակիներ հետ: 1917թ. դեկտեմբերի 5-13-ը երկրորդ համաղազախական կոնգրեսի ժամանակ որոշվեց Ալաշ Օրդա կառավարության կազմի մեջ ներառել Ակմոլայի, Ուրալի, Տուրգայի, Սիրդարիայի, Սեմիրեչիենի, Սամարկանդի, Զակասպիիսկի մարզերը, Ֆերգանայի Ղազախական շրջանը (уезд) և ղազախներով բնակեցված Ալթայի մարզի *վոլոստները*.[29] Սակայն, քաղաքացիական պատերազմում Բոլշևիկների հաղթանակից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց, որի արդյունքում ալաշականները ինքնավարության որոշակի չափաբաժին ստանալու ակնկալիքով իրենց կողմորոշումը ուղղեցին դեպի բոլշևիկները: Ալաշականների որոշման հիմքում ընկած էր նաև Բոլշևիկների կողմից ներկայացվող ազգերի ինքնորոշման գաղափարը: Ալաշ Օրդայի ինքնուրույնությանը վերջ դրվեց 1920 թ. երբ Բոլշևիկները հաստատեցին իրենց վերահսկողությունը Ղազախական տարածքների վրա: Թեև ինքնուրույնությունը շատ կարճ կյանք ունեցավ, այդուամենայնիվ, այն շարունակում է ապրել ղազախների պատմական հիշողությունում իբրև առաջին, արդի, անկախ Ղազախական պետություն հաստատելու ժամանակաշրջան: Նշենք, որ պատմական այս իրադարձությունները հետագայում՝ Խորհրդային

[28] Bhavna Dave, նշվ. աշխ., էջ. 47.
[29] K. Nurpeis (2003). նշվ. աշխ., էջ.255.

Միության ժամանակաշրջանում, վերածվելու էին մի հետաքրքիր պատմագրական նյութի, որի միջոցով կենտրոնական իշխանությունը պետք է փորձեր ուղղորդել ղազախական ինքնութենության որոշակի գործընթացներ:

Խորհրդային Ղազախստան

1920թ. -ին՝ իբրև Ղրղզական Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն[30], հիմք դրվեց Ղազախստանի պետականությանը: 1925 թ.-ին ՌՍՖՍՀԻ-ի կազմում Ղազախստանին տրվեց ինքնավար հանրապետության կարգավիճակ և արդեն 1936 դեկտեմբերին դարձավ Խորհրդային միության անդամ պետություն:[31]

Ղազախստանի պատմության խորհրդային փուլը շրջադարձային նշանակություն ունեցավ ղազախ ազգի զարգացման և կայացման գործում: Խորհրդային ռեժիմն, ըստ էության, արդիականացման ալիք առաջացրեց Ղազախստանում: Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունն, իր կարևորագույն փոփոխություններով հանդերձ, շարունակում էր դրսևորվել ռուսականացման և արդիականացման գործնթացներում (քաղաքաշինություն, արդյունաբերություն, կրթություն և այլն): Խորհրդային Միության տնտեսական և ժողովրդագրական քաղաքականության հետևանքով Ղազախստանը վերածվեց տարբեր ազգեր ներկայացնող էթնիկ խմբերի բնակավայրի: Ռուսականության գերակայության

[30] Այս պարագային հարկ է նկատել մի կարևոր ինքնութենական իրողություն, երբ ղազախական պետությունը անվանվում էր *Ղրխզական*՝ չշփոթելու համար կազակ և ղազախ բառերը:

[31] Hooman Peimani, Conflict and Security in Central Asia and the Caucasus, Greenwood Publishing Group, 2009, p. 124.

պայմաններում բազմաէթնիկ հասարակության ձևավորումը տարաբնույթ մշակութային և քաղաքական մարտահրավերներ առաջացրեց Ղազախստանում:

Խորհրդային ինտեգրացիան հաջող իրականացնելու նպատակով Խորհրդային կառավարությունը ձեռնամուխ է լինում արագ ինդուստրացման և կոլեկտիվացման գործընթացներին: Ղազախստանի հիմնական տնտեսական գործունեությունները ծավալվում էին մետաղական արդյունաբերության, գյուղատնտեսական և այլ արտադրական ոլորտներում: Ղազախստանյան մետաղական հանքարդյունաբերությունը խիստ կենսական նշանակություն ուներ Ռուսաստանի զարգացող ծանր արդյունաբերության համար, մասնավորապես, նախապատերազմյան շրջանում: 1930–ականների Խորհրդային ինդուստրացման, ինչպես նաև Ղազախստանի արդյունաբերության արդիականացման հետևանքով, տեղի ունեցավ ռուսական (ավելի քան 700 հազար մարդ) արտադրական աշխատուժի տեղաշարժ դեպի Ղազախստան:[32] Արդյունաբերության զարգացման համար Խորհրդային կառավարությունը սկսեց գյուղատնտեսության հարկման քաղաքականությունը: Վերջինս իրականցվում էր կոլեկտիվացման քաղաքականության համատեքստում: Կոլեկտիվացման քաղաքականությունը գյուղացիական ընդվզում առաջացրեց, որի պատճառը նրանց քաղաքակրթական տեսակի մեջ էր: Գյուղատնտեսությունը և անասնապահությունը համարվում է քոչվորական կենսաձևի անբաժան մասը[33] և, բնականաբար, այդ

[32] Philip S. Gillette, Ethnic Balance Imbalance in Kazakhstan's Regions, Central Asia Monitor, No. 3, 1993, p. 4.

[33] Այս առումով բավականին հետաքրքրական ձևակերպումներով է հանդես գալիս համաժողովրդական հեղինակություն վայելով

հարաբերությունների ինստիտուցիոնալացումը կամ այդ բնագավառում նոր տեխնոլոգիաների ներմուծումն առաջացնելու էր ղազախ գյուղացիության դիմադրությունը:

Երկրորդ աշխարհամարտին նախորդած և ընթացիկ շրջանում միության տարբեր կողմերից Ղազախստան արտաքսվեցին նոր էթնիկ խմբեր: Արդյունքում 1937 թ.-ին Ղազախստանը արտաքսվեցին 95 հազար կորեացիներ, 102 հազար լեհեր, 1941–ին ավելի քան 500 հազար գերմանացիներ Պովոլժիեյի շրջանից, Ուկրաինայից և Հյուսիսային Կովկասից, 1944 –ին 500 հազար չեչեններ, ինգուշներ, կարաչայներ, բալկարներ, կալմիկներ և 4, 5 հազար Ղրիմի թաթարներ ինչպես նաև 1948-ին շուրջ 2,7 հազար մեսխեթցի թուրքեր Կովկասից:[34]

Մյուս կարևոր խորհդային քաղաքականությունը, որ կրկին խախտեց Ղազախստանի էթնիկ հավասարակշռությունը 1950-ականներին Նիկիտա Խրուշովի նախաձեռնած (Virgin Land Campaign) էր: Վերջինիս հետևանքով միլիոնավոր սլավոնական ժողովուրդներ բնակեցվեցին Ղազախստանի հյուսիսային հատվածում՝ հարոս հողերը մշակելու (հացահատիկ) նպատակով: Չնայած Ղազախ հասարակության դիմադրություններին՝ խրուշչովյան քաղաքականության արդյունքում Ղազախստանը ունեցավ ավելի քան 25 միլլիոն հեկտար հերկված հող:[35] Դրա հետ մեկտեղ ղազախական գյուղատնտեսությունը համալրվեց հացահատկի մշակման նոր տեխնոլոգիաներով: Անժխտելի փաստ է, որ Խորհրդային Միության կազմում Ղազախստանը ապրեց

խոշորագույն ղազախ մշակութային գործիչ՝ Աբայ Կունանբայեվը (1845-1904), ով իր *«Սեև Խոսք»* (*Қара* сөз) աշխատությունում:

[34] Абдинжапар Абдакимов, История Казахстана; С Древнейших Времен До Наших Дней, Алматы; РИК, 1994, стр. 151-152.

[35] Абдинжапар Абдакимов,նշվ. աշխ., էջ. 184.

զարգացման աննախադեպ շրջան: Ներկայիս Ղազախստանի հզոր տնտեսության հիմքը հանդիսացող նավթային արդյունաբերության զարգացման հիմքը դրվել է խորհրդային շրջանում: Այս բոլոր ռեսուրսները հետգայում օգտագործվելու է Ղազախստանի նախագահ Նորսուլթան Նազարբաևի վարչակարգի կողմից հետխորհրդային ազգաշինության և պետականաշինության գործընթացներում:

Ռուսական նշանավոր *Օգոնիոկ* ամսագրին տրված հարցազրույցում Ղազախստանի կենտկոմի առաջին քարտողար Դինմուխամեդ Կունաեվը նշում է.

«Խորհրդային քաղաքականությունների հետևանքով Ղազախստանը արձանագրեց զգալի աճ անասնաբուծության, գյուղատնտեսության, քիմիական և տեքստիլ արդյունաբերությունների ոլորտներում: Նախկին քոչվորական տարածքներում 64 նոր քաղաքներ, հիմնադրվեցին 174 քաղաքատիպ ավաններ և արդյունաբերական կենտրոններ այդ թվում Կարագանդան, Բալխաշը, Ջեզխազգենը և Տեմիրտուն ».[36]

Չնայած ուրբանիզացիայի դրական կողմերին՝ այն նաև բացասական ազդեցություն ունեցավ ղազախական էթնիկ ինքության զարգացման վրա: Խորհրդային ճարտարապետական արտեֆակտները, փողոցների և հրապարակների անվանումները իբրև քաղաքային միջավայր՝ ազդելու էին հասարակության մտածելակերպի վրա ռուսական գաղափարաների տարածման առումով: Քաղաքային տարածքները հիմնականում բնակեցվում էին ոչ ղազախ՝ ռուսախոս ժողովուրդներով: Ղազախստանի խոշոր քաղաքային միջավայրերը մասնավորապես բնակեցված էին էթնիկ ռուսներով: Համաձայն 1989 թ.-ի ժողովրդագրական

[36] Oganiok Interview, Kunaenv D. A., Candidate member of the Politburo of the CPSU Central Committee, First Secretary of the Central Committee of the Communist Party of Kazakhstan, Ogonek, no. 34, 1970.

ուսումնասիրությունների՝ Ղազախստանի քաղաքային բնակչության միայն 27.1 %-ն էր Ղազախ, այնինչ 50.8 %-ը Ռուսներ էին[37]: Քաղաքներում ապրող էթնիկ ռուսները ներկայացված էին երկրի կրթական, կառավարման, ֆինանասական և այլ տարբեր, առանցքային ոլորտերում: Երկրի կարևորագույն ինստիտուտները վերածվել էին ռուսալեզու միջավայրերի, և ռուսերենը իբրև քաղաքային լեզու դարձավ ընտրախավի պատկանելիության ցուցիչներից մեկը: Այնինչ ղազախերենը վերածվել էր գյուղական կենցաղային լեզվի և էթնիկ ղազախների գյուղական միջավայրերում կենտրոնացած լինելու հետևանքով ղազախական ինքնությունը, մշակույթը և ավանդույթները դուրս էին մնացել արդի հասարակական հարաբերություններից: Ղազախստանը խորհրդային համակարգին ինտեգրելու համար Խորհրդային Միությունը վարում էր լավ մշակված լեզվական քաղաքակնություն: Հատկապես, կարևոր էր Խորհրդային կառավարության որոշումը լատինական այբուբենը կիրիլիցայով փոխելու վերաբերյալ: Այս որոշումը ուներ մի քանի ենթատեքստեր. Նախ, դրանով փորձ էր արվում կանխել հաղորդակցությունը Թուրքիայի թուրքերի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս ժողովուրդների միջև և ապա գերակա դիսկուրսները Խորհրդային Միությունը կարողանալու էր օգտագործել իր օգտին: Ռուսերենը որպես գրական և գիտության լեզու՝ ղազախներին հնարավորություն էր տալու ընբռնել խորհրդային բազմաթիվ հղացքեր:

[37] William Fierman, Language and Education in Post-Soviet Kazakhstan: Kazakh-Medium Instruction in Urban Schools, The Russian Review, vol. 65, no. 1, 2006, p. 100.

Գորբաչովյան վերակառուցման տարիները միանգամայն նոր իրավիճակ ստեղծեցին Ղազախստանում: 1986 թ.-ին Գորբաչովը, փորձելով բարեփոխումներ իրականցներ Ղազախստանի կուսակցական համակարգում, Կունաևի պաշտոնում նշանակեց ազգությամբ ռուս Գենադի Կոլբինին: Այս որոշման հիմքում ընկած էին 1986 թվականի դեկտեմբերին Ալմա Աթայում տեղի ունեցած բախումները, որոնք ըստ Գորբաչովի ուղղորդվում էին որոշակի կլանների կողմից: Գորբաչովի համոզմամբ ստեղծված իրավիճակը կարող էր շտկել մի ղեկավար, որն, ըստ էության կապված չէր լինի տեղական կլանային խմբավորումների հետ, և այդ ղեկավարը Կոլբինն էր:[38]

Քաղաքական այս որոշումը խթան հանդիսացավ ղազախների էթնիկ գիտակցության համար: Գորբաչովի որոշումը ղազախների կողմից ընկալվում էր իբրև ղազախականությանը ստորադասելու բացասական փորձ, որը, սակայն, ներուժ ուներ վերածվելու ազգային գիտակցության և ազգաշինության գործնթացների զարգացման դրական ուժի: Չնայած Ալմա Աթայում տեղի ունեցած ժողովրդական ընդվզումներին՝ Կոլբինը որոշ քայլեր ձեռնարկեց ստեղծելու տարածքներ հանրային լսումների համար, սակայն շարժումը շարունակում էր մնալ պայթունավտանգ: Վերակառուցման քաղաքականության պարագայում ստեղծվել էր անկառավարելի ինֆորմացիոն վակում, որը ազգային գաղափարներով և պատմական հիշողություններով (կոլեկտիվացման պատճառած տրավմաները, սովը, Virgin Land-ը) լցվելու դեպքում կարող էր վերածվել լուրջ հակախորհրդային ընդվզման: Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը Մոսկվան որոշեց հեռացնել Կոլբինին և նրա

[38] Mikhail Gorbachev, *Gorbachev: On My Country and the World*, George Shriver trans., Columbia University Press, 2005, p. 86.

տեղում նշանակել էթնիկ ղազախախոս քաղաքական գործիչ Նորսուլթան Նազարբաևին, ով մինչ այդ տարբեր պաշտոններ էր զբաղեցրել էր կոմունիստական կուսակցության շարքերում: 1991թ.-ի դեկտեմբերի 16-ին Ղազախստանը հռչակեց իր անկախությանը և երբեմնի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Նորսուլթան Նազարբաևը դարձավ նորանկախ երկրի առաջին նախագահը: Վերջինիս իշխանությունը ավտորիտարիզմի տարրերով հանդերձ նորանկախ Ղազախստանի համար դարձավ տարբեր նորրարական տեխնոլոգիաների ներդրման հեղինակ:[39] Նրա վերափոխումներն ըստ էության ենթադրում էին սոցիալական գործընթացների մի համալիր, որի կենտրոնում դրված է ազգային տեսակի ինոովացիայի հիմնախնդիրը:

Վերջաբանի փոխարեն

Ղազախստանի պարագայում մեկ բան ակնհայտ է. ռուսական կայսրության գաղութային քաղաքականության դրսևորումները իր գործարկման ամենատարբեր շերտերում տարբերվում են արևմտյան գաղութային փորձառությունից: Չնայած այն հանգամանքին, որ Ղազախստանում ռուսական գերիշխանության դեմ մշակութային և ազգային դիմադրության ներուժը բավականին թույլ էր, 1800-ականների և 1905 թվականի

[39]Ղազախստանի պատմության Նազարբայևյան վարչակարգի նորարական քաղաքականությունների մասին տե՛ս Նարեկ Մկրտչյան, *Ղազախստանի Ազգաշինության Մարտահրավերները*, Ժամանակակից Եվրասիա, հատոր (II) 2, 2013, էջ. 68-81. Narek Mkrtchyan, *Astana: A New Post-Soviet Text*, International Journal of Humanities and Social Sciences, Vol. 3 No. 21, Special Issues-December 2013, pp. 229-237. Narek Mkrtchyan, *The Notion of 'Kazakhness' Behind the Symbolic Nation-Building of Kazakhstan*, CEU Political Science Journal, Vol. 9, No. 1-2, 2014, 16-38.

շարժումներին որոշ վերապահումներով կարելի է վերագրել իբրեն ռուսական գերիշխանության հակազդման գործընթացի:

Ռուսական քաղաքականությունը Ղազախստանի նկատմամբ դիտարկելի է ոչ թե կայսրության նպատակների կոծկման՝ այլ նրա քաղաքակրթող առաքելության համատեքստում: Համաձայն վերոշարադրյալի՝ ռուսական կայսրության և խորհրդային միության ժողովրդագրական քաղաքականությունների հետևանքով ղազախական ինքնությունը ապրեց ազգային ապակառուցման մի փորձառություն: Սակայն հատկանշական է մի կարևոր իրողություն, որ ղազախական ազգային ինքնության ճգնաժամը հետագայում Նազարբաևի վարչակարգի համար վերածվելու էր իբրև ազգային, նոր՝ քաղաքացիական ինքնության կառուցման տեսլականի: Ղազախական բազմաէթնիկ հասարակությունը, որ ձևավորվել է ռուսական քաղաքականության արդյունքում, անկախ Ղազախստանի համար դառնում է *«նոր բրենդ»* աշխարհի հետ հարաբերվելու համար: Դիտարկելով Ղազախստանի քաղաքական դիսկուրսը՝ կարելի է նշել, որ ռուսական գերիշխանական քաղաքականության ժառանգությունը՝ այն է բազմաէթնիկ և բազմակրոն հասարակությունը, Նազարբաևի վարչակարգի ձեռքին դառնում է գործիք գործող իշխանության ներքին և արտաքին լեգիտիմության ձեռքբերման համար: Մեկ այլ ձևակերպմամբ ղազախ ազգի պատմության ինքնութենական ճգնաժամային վերոշարադրյալ հատվածը կարելի է սահմանել իբրև ստեղծարար ավերման ժամանակաշրջան:

KAZAKHSTAN: FROM KERE AND JANIBEK TO NAZARBEV
(Summary)

Mkrtchyan Narek

The article tries to examine identical transformations of the Kazakh people conditioned by the policies of Tsarist and Soviet Russia. The alienation of the Kazakh's national identity had started with the collapse of Khazkh Khanate. Next, the paper briefly discusses the biocultural and political contexts of the Kazakh uprisings of the 18th and 19th centuries. The concept of bioculture provides a unique opportunity to understand whether the Kazakh uprisings and movements were reactionary feudal movements or as progressive deeds of national liberation. Due to Russian hegemony the Kazakh identity and language were marginalised, hence allowing Russianness to get integrated into differents spheres of the Kazakh society. By analyzing the demographic and identical problems of the Soviet Kazakhstan, the paper also put an emphasis on the phenomenon of technological innovation of Kazakhstan. Most of these innovations would later be used by Norsultan Nazarbaev regime to implement different ambitious national projects.